ՀԱՄԼԵՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՔՂԵՏԻԿԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀՐԴԵՇՆԵՐԸ

Մանկական ուսուցողական բանաստեղծություններ

Երևան
Անտարես
2017

ՀՏԴ 821.19-93 Մաթևոսյան
ԳՄԴ 84(5Հ)-5
Մ 151

ԱՌՆԱՊ
ARNAP
DRR NATIONAL PLATFORM

Սույն գրքույկը հրատարակվել է Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմի աջակցությամբ

Մաթևոսյան Համլետ
Մ 151 Աղետիկը և անտառային հրդեհները: Մանկական ուսուցողական բանաստեղծություններ / Համլետ Մաթևոսյան - Եր.: Անտարես: 2017.– 16 էջ:

«Աղետիկը և անտառային հրդեհները» հեղինակի 11-րդ մանկական գիրքն է: Հրատարակված բոլոր գրքերը նպաստում են երեխաների մոտ ձևավորելու տարբեր վտանգներին դիմակայելու հմտություններ, զարգացնելու անվտանգության ապահովման մտածողություն:

Գիրքը նախատեսված է մինչև 10 տարեկան երեխաների, ինչպես նաև նրանց ծնողների համար:

ՀՏԴ 821.19-93 Մաթևոսյան
ԳՄԴ 84(5Հ)-5

ISBN 978-9939-0-2497-4

© Մաթևոսյան Հ., 2017

Ո՞վ եմ, ինչ եմ,
Ես չգիտեմ,
Ինքս բարի
Իմ բնույթով
Դերասան եմ:

Ես սիրում եմ
Խաղալ դերեր,
Մեկ երկրաշարժ,
Մեկ՝ ջրհեղեղ,
Մեկ էլ վթար
Կամ դեր մի այլ:

Ես չգիտեմ՝
Ո՞նց է լինում,
Ինչին դիպչում
Մի փորձանք եմ
Հետս բերում,
Դրա համար
Ինձ բոլորը
Աղետիկ են
Միշտ անվանում:

Բայց դե ասեմ,
Որ իմ գալը
Կախված է միշտ
Ձեր գործերից:

Թե ամեն ինչ
Նորմալ լինի,
Իմ լինելը
Չի՛ էլ լինի:

Բայց դե նորմալ
Ո՞նց կլինի,
Թե մարդն իրեն
Լավ չպահի:

Դու ինձ ասա՝
Կամ մի աղետ,
Որում մարդը
Մեղք չունենա:
Եթե չկա
Ուրեմն այդ,
Իմ դերերը
Միշտ կան ու կան:

Ասեմ նույնիսկ՝
Անտառային
Հրդեհների
Դերերը կան:

Հարցնում ես.
– Ինչ են դրանք:
Ասեմ ես քեզ,
Որ իմանաս՝
Անտառային
Հրդեհները
Ողջ աշխարհում
Լինում են միշտ

Երեք տեսակ՝
Գետնի վրա,
Այսպես կոչված՝
Գետնատարած,
Կամ գետնի տակ.
Անվանում են
Ստորգետնյա,
Եվ վերևում՝
Գագաթներին,
Որը պարզ է,
Որ կկոչվի
Գագաթնային
Կամ երբեմն՝
Սաղարթային:

Ասեմ նաև,
Որ դրանցից
Ամեն մեկը
Հրդեհվելու
Եվ այրվելու
Իր ձևն ունի:
Համոզվա՛ծ եմ՝
Դո՛ւ էլ գիտես,
Որ դրանցից
Ամեն մեկի
Հենց անո՛ւնը
Մեզ հուշում է
Հրդեհվելու
Իրեն ձևը:

Երբ ասում են
Գետնատարած,
Ես տեսնում եմ,
Թե անտառում
Ոնց են այրվում
Թե խո՛տ, թե թո՛ւփ,
Ծառի կեղև
Ու ծառի բու՛ն:

Եթե ասեն,
Թե հրդեհ է
Գագաթնային,
Կհասկանանք,
Որ այրվում են
Սաղարթները
Անտառների,
Որ հրդեհը
Տարածվում է
Գագաթներով
Այդ ծառերի:

Պարզ է արդեն,
Որ հրդեհը
Ստորգետնյա
Չի՛ երևա,
Այլ կմխա,
Տորֆի նման
Ծուխ կհանի
Ու կծխա,
Գետնի տակով
Կտարածվի,
Ինչ-որ տեղից
Դուրս կպրծնի
Ու կվառվի:

Դե արի ու
Գլուխ հանի,
Թե ինքն իրեն
Ո՞նց կպահի:

Ո՞վ չգիտի,
Որ առանց կայծ,
Առանց կրակ
Հրդեհ չկա,
Որ հրդեհն էլ
Ունի պատճառ,
Իսկ պատճառն էլ
Կամ լինում է
Արհեստական,
Կամ բնական:

Դե, բնական
Հրդեհները
Անտառային
Ծագում են կամ
Կայծակներից,

Կամ էլ շատ շոգ,
Երկարատև
Եղանակին
Չոր խոտերի
Ինքն իրեն
Բռնկումից:

Դե, բնական
Հրդեհների
Մի դեպք էլ կա՝

Թե անտառից
Վերև ընկած
Լեռան գլխին
Մի հրաբուխ
Հանկարծ ժայթքի,
Հրդեհները
Կբռնկվեն
Հրաբխի
Տաք լավայից:

Լավ կլինի,
Որ միշտ հիշես՝
Անտառային
Այդ բնական
Հրդեհների
Թիվն աշխարհում
Անտառային
Հրդեհների
Ամբողջ թվի
Յոթ տոկոսն է
Միայն կազմում:

Բա ինչ կանես.
Ես էլ լինեմ
Քո փոխարեն՝
Կզարմանամ:
Կզարմանամ,
Թե մարդն ինչքան
Չար կլինի,
Կամ էլ ինչքան
Անգիտակից,
Որ իր գործով
Անտառներում
Այդքան թվով
Հրդեհների
Պատճառ լինի:

Համոզված եմ,
Որ մեծանաս,
Այ, այդպիսին
Երբևիցե
Դու չես դառնա,

Գիտես ինչու,
Որովհետև
Անտառային
Հրդեհների
Ամեն պատճառ
Դու կիմանաս,
Ու քանի որ
Հրդեհների
Հետևանքով
Խոտ ու ծաղիկ,
Ծառեր, թփեր
Պիտի վառվեն
Ու վերանան,
Ամեն թռչուն,
Ամեն սողուն

Ու կենդանի
Առանց բնի,
Առանց կերի
Կհեռանա
Ու կկորչի,
Պա՛րզ է, որ դու
Անտառներում
Ուրիշ ձևի
Քեզ կպահես,

Ավելի ճիշտ՝
Այնպես կանես,
Որ հրդեհներ
Չբռնկվեն,
Որ ամեն թուփ,
Ամեն ծաղիկ
Ու կենդանի
Իրեն համար
Անհոգ ապրի:

Դե, որպեսզի
Հետագայում
Դու այդպիսի
Լավ մարդ դառնաս,
Ուրեմն քեզ
Պիտի ասեմ,
Թե անտառում
Ինչեր չանես,
Որ հրդեհի
Պատճառը հենց
Դու չլինես:

Նախ և առաջ
Անտառներում
Խարույկ վառել
Դու չփորձես,
Իսկ թե հանկարծ
Այլ ելք չունես՝
Որտեղ պիտի
Խարույկ վառես,
Դու այդ տեղից
Ուրիշ տեղի
Բռնկվելը
Կբացառես:

Ասեմ ինչպես՝
Դու խարույկի
Ընտրած տեղի
Չորս բոլորը
Պիտի փորես,
Չոր խոտերից,
Տերևներից,
Այրվող փայտի
Կտորներից
Պիտի մաքրես,
Ու կես մետր
Լայնությունով
Չայրվող գոտի
Պիտի անես
Եվ դրանից
Հետո միայն
Քո խարույկը
Հանգիստ վառես:

Համոզված եմ,
Որ դու երբեք
Անտառներում
Շիշ չես ջարդի,
Ու անտառում
Դատարկ շշեր,
Կամ շշերի
Կտորտանքներ
Դու չես թողնի,
Որովհետև
Դու՛ էլ գիտես,
Որ դրանցից
Ինչեր ասես,
Որ չեն լինի:

Իսկ թե բան է՝
Ծնողներիդ
Կամ մեծերի
Հետ անտառում
Եթե լինես,

Նրանց կասես
Վառվող լուցկի,
Կամ մխացող
Ծխախոտի
Ոչ մի կտոր
Ցած չնետեն,
Կամ էլ յուղոտ
Կամ բենզինոտ
Լաթի կտոր
Չմոռանան՝
Գետնին թողնեն...

Թե չէ գիտես –
Աղետիկն եմ,
Ես մի շնչով
Ձեզ մոտ կընկնեմ,
Բոց ու կրակ
Ես կբերեմ,
Թե տղա եք՝
Ինձնից փախեք:

Ու քանի դեռ
Չեմ մոռացել,
Ասեմ, որ դու
Նրանց նաև
Միշտ հիշեցնես՝
Թե սնուցման
Համակարգը
Մեքենայի
Անսարք լինի,
Անտառ մտնել
Թող չփորձեն,

Էլ չեմ ասում,
Որ անտառում
Կամ չորացած
Խոտով պատված
Տարածքներում
Թող փորձ չանեն
Մեքենաներ
Լիցքավորեն:
Նման դեպքում
Հավատա ինձ,
Հաստատ կգամ

Աղետիկի
Իմ դերերը
Ես կխաղամ,
Եվ դու գիտես
Ինչեր կանեմ,
Ինչ փորձանքներ
Ես կբերեմ:

Կուզեմ ասեմ
Քեզ դրանցից
Մի քանիսը.

Նախ՝ այդ վայրում
Կվերացնեմ
Թթվածինը,
Ցած կգցեմ
Այրվող ճյուղեր,
Կհրդեհեմ
Էլեկտրական
Լարեր, սյուներ,

Տեսակ-տեսակ
Խոտաբույսեր,
Մեքենաներ,
Տնակ, վրան,
Հագուստ, կոշիկ,
Ճանապարհիս
Ինչ պատահի՝
Կայրեմ, կանցնեմ,
Հրե օղակ
Ես կսարքեմ,

Հրե բոցով
Արգելափակ
Տեղ կսարքեմ,
Ելքի ուղի
Ձեզ չեմ թողնի:
Դե, այդ դեպքում
Ինչեր ասես,
Որ չեմ անի՝
Ծխով խեղդեմ,
Ծխահարեմ,
Գիտակցության
Կորուստ բերեմ,

Ինչքան ասես
Այրվածք անեմ,
Ու քեզ ասեմ,
Որ ինձ համար
Ոչ մի բանը
Արժեք չունի.
Մարդ կլինի,
Թե կենդանի,
Ծառ կլինի,
Թե բույսերի
Ինչ-որ տեսակ,

Դրամ լինի,
Թե թանկարժեք
Իրեր ու զարդ՝
Տեղում կայրեմ,
Միայն մոխիր
Ես կթողնեմ:

Դե, այսքանը
Որ իմացաք,
Արդեն պարզ է՝
Որտեղ կրակ,
Կամ թե ծխի
Ինչ-որ քուլա
Հանկարծ տեսնեք,
Տեղն ու տեղը
Ինը մեկ մեկ
Զանգահարեք,
Տեղը ասեք,

Ինչ հարցեր տան՝
Պատասխանեք,
Ու փրկարար
Հրշեջների
Տեղ հասնելուն
Պատրաստ եղեք:

Նման դեպքում
Աղետիկը
Ձեզ մոտ չի գա,
Ձեզ վնասող
Նա չի՛ դառնա...

ՀԱՄԼԵՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՔՂԵՏԻԿԸ ԵՎ ՔՆՏՔՌՔՅԻՆ ՀՐԳԵՇՆԵՐԸ

Տեխնիկական խմբագիր՝
Արարատ Թովմասյան

Կազմը և համակարգչային ձևավորումը՝
Նարինե Հովհաննիսյանի

Անտարես

«ԱՆՏԱՐԵՍ» հրատարակչատուն
Երևան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ +(374) 58 10 59, 56 15 26
Հեռ./ֆաքս՝ +(374) 58 76 69
antares@antares.am
www.antares.am